

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն № 1 4 1
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի
2016թ. հուլիսի 27-ին կայացած նիստի

Նախագահությամբ՝	ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր Ա.Լոքյանի
Քարտուղարությամբ՝	ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական քարտուղար Հ.Ստեփանյանի
Մասնակցությամբ՝	ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի անդամների (ներկայության թերթիկը կցվում է)

Օրակարգ՝

1. ՀՀ պետական կառավարման ակադեմիայի առկա ուսուցման մագիստրատուրայի 2015-2016 ուսումնական տարվա ուսումնական աշխատանքների ամփոփում:
Ձեկուցող՝ ուսումնամեթոդական վարչության պետ Լ. Զիլֆուղարյան:
2. Մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման 2016-2017 ուսումնական տարվա ուսումնական պլանների և ժամանակացույցի քննարկում և հաստատում:
Ձեկուցող՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Խ. Բեգիրջյան:
3. ՀՀ ՊԿԱ ասպիրանտուրայի 2016 թվականի որակավորման քննությունների գարնանային քննաշրջանի արդյունքների ամփոփում:
Ձեկուցող՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Խ. Բեգիրջյան:
4. ՀՀ պետական կառավարման ակադեմիայի արտաքին կապերի գծով 2015-2016 ուսումնական տարում կատարած աշխատանքների ամփոփում:
Ձեկուցող՝ արտաքին կապերի գծով պրոռեկտոր Թ. Խեչոյան:
5. 2015-2016 ուսումնական տարում գիտական խորհրդի կատարած աշխատանքների ամփոփում:
Ձեկուցող՝ գիտական քարտուղար Հ. Ստեփանյան:
6. Ընթացիկ հարց: 2016-2017 ուսումնական տարվա առաջին կիսամյակում գիտաժողովների կազմակերպման հարցի քննարկում:
Ընդհանուր քննարկում:
7. Ընթացիկ հարց: Արսեն Գեորգիի Պողոսյանին, Արման Կառլենի Մելքոնյանին, Ռոբերտ Սուրենի Ղազարյանին ԺԲ.00.02-«Հանրային իրավունք» մասնագիտությամբ հայցորդ ձևակերպելու մասին Իրավագիտության ամբիոնի կողմից ներկայացված միջնորդության քննարկում:
Ձեկուցող՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Խ. Բեգիրջյան:

1. **Լսեցին՝** ՀՀ պետական կառավարման ակադեմիայի առկա ուսուցման մագիստրատուրայի 2015-2016 ուսումնական տարվա ուսումնական աշխատանքների ամփոփման հարցը:

Ձեկուցող՝ ուսումնամեթոդական վարչության պետ Լ. Զիլֆուղարյան:

Արտահայտվեցին՝ Ա. Լոքյանը, Գ. Գսպոյանը, Խ.Բեգիրջյանը, Ա.Սարգսյանը:

Գիտական խորհրդի նախագահ Ա. Լոքյանը նշեց, որ փոփոխությունները նկատելի են և պետք է ամեն ջանք գործադրել նոր մարտահրավերները հաղթահարելու ուղղությամբ:

Որոշեցին՝ Ուսումնամեթոդական վարչության աշխատանքները գնահատել բավարար (հաշվետվությունը կից ներկայացվում է):

2. **Լսեցին՝** Մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման 2016-2017 ուսումնական տարվա ուսումնական պլանների և ժամանակացույցի քննարկման և հաստատման հարցը:

Զեկուցող՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Խ. Բեգիրջյան:

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Խ.Բեգիրջյանը:

Որոշեցին՝ Հաստատել մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման 2016-2017 ուսումնական տարվա ուսումնական պլանները և ժամանակացույցը (կից ներկայացվում է ուսումնական տարվա պլանները և ժամանակացույցը):

3. **Լսեցին՝** Ասպիրանտուրայի 2016 թվականի որակավորման քննությունների գարնանային քննաշրջանի արդյունքների ամփոփման հարցը:

Զեկուցող՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Խ. Բեգիրջյան:

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Խ.Բեգիրջյանը:

Որոշեցին՝ Ասպիրանտուրայի 2016 թվականի որակավորման քննությունների գարնանային քննաշրջանի արդյունքներն ընդունել ի գիտություն (կից ներկայացվում է 2016թ որակավորման քննությունների գարնանային քննաշրջանի արդյունքները):

4. **Լսեցին՝** ՀՀ պետական կառավարման ակադեմիայի արտաքին կապերի գծով 2015-2016 ուսումնական տարում կատարած աշխատանքների ամփոփման հարցը:

Զեկուցող՝ արտաքին կապերի գծով պրոռեկտոր Թ. Խեչոյան:

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Խ.Բեգիրջյանը, Գ.Գսպոյանը: Մատնանշվեց, որ արտաքին կապերի գծով պրոռեկտոր Թ. Խեչոյանը 2015-2016 ուս. տարում իրականացրել է հսկայածավալ աշխատանքներ, որոնք նպաստում են Ակադեմիայի միջազգայնացմանը և մի շարք ուսանողների հնարավորություն ընձեռում իրենց կրթությունը շարունակել արտասահմանյան մի շարք բուհերում:

Որոշեցին՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի արտաքին կապերի գծով 2015-2016 ուսումնական տարում կատարած աշխատանքները գնահատել լավ (հաշվետվությունը կից ներկայացվում է):

5. Լսեցին՝ 2015-2016 ուսումնական տարում գիտական խորհրդի կատարած աշխատանքների ամփոփման հարցը:

Զեկուցող՝ գիտական քարտուղար Հ. Ստեփանյան:

Զեկուցողը ներկայացրեց, որ գիտական խորհրդի 2015-2016 ուսումնական տարվա աշխատանքային պլանով նախատեսված հարցերը, ինչպես նաև ընթացիկ հարցերը ամբողջությամբ քննարկվել են գիտական խորհրդի նիստում և կայացվել համապատասխան որոշում:

Արտահայտվեցին՝ Խ.Բեգիրջյանը, Ա.Բաղդասարյանը:

Որոշեցին՝ 2015-2016 ուսումնական տարում գիտական խորհրդի կատարած աշխատանքները գնահատել բավարար:

6. Լսեցին՝ Ընթացիկ հարց: 2016-2017 ուսումնական տարվա առաջին կիսամյակում գիտաժողովների կազմակերպման հարցի քննարկում:

Ընդհանուր քննարկում:

Արտահայտվեցին՝ Ա.Լոքյանը, Մ.Մարգարյանը, Հ.Ստեփանյանը: Քաղաքագիտության ամբիոնի վարիչ Մ.Մարգարյանը նշեց, որ Քաղաքագիտության ամբիոնը հոկտեմբերի 10-11-ը կազմակերպում է գիտաժողով՝ «Կառավարող էլիտայի արդիականացման առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով: Գիտական քարտուղար Հ.Ստեփանյանը նշեց, որ Իրավագիտության ամբիոնի ասպիրանտ Հայկ Կեսոյանի հետ նախաձեռնել են «Սահմանադրական բարեփոխումները Հայաստանի Հանրապետությունում. արդի մարտահրավերները» խորագրով երիտասարդական գիտաժողով, որը նախատեսվում է իրականացնել հոկտեմբերի 20-ից նոյեմբերի 10-ն ընկած ժամանակահատվածում: Այնուհետև գիտական խորհրդի նախագահ Ա. Լոքյանը մատնանշեց, որ գիտաժողովների և մրցույթների կազմակերպումը կարևոր է և խրախուսելի, քանի որ ուսանողների գիտելիքների հարստացման լրացուցիչ միջոց է հանդիսանում:

Որոշեցին՝ 2016-2017 ուսումնական տարվա առաջին կիսամյակում գիտաժողովների կազմակերպման ժամանակացույց սահմանել հոկտեմբերի 10-ից նոյեմբերի 10-ը:

5. Լսեցին՝ Արսեն Գեորգիի Պողոսյանին, Արման Կառլենի Մելքոնյանին, Ռոբերտ Սուրենի Ղազարյանին ԺԲ.00.02-«Հանրային իրավունք» մասնագիտությամբ հայցորդ ձևակերպելու մասին Իրավագիտության ամբիոնի կողմից ներկայացված միջնորդության քննարկումը:

Զեկուցող՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Խ. Բեգիրջյան:

Խ.Բեգիրջյանը ներկայացրեց, որ իրավագիտության ամբիոնում քննարկվել է ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» մասնագիտացմամբ հայցորդ ձևակերպվելու համար դիմած Արսեն Գեորգիի Պողոսյանի, Արման Կառլենի Մելքոնյանի, Ռոբերտ Սուրենի Ղազարյանի դիմումները: Հիմք ընդունելով նշված անձանց կողմից ներկայացված ռեֆերատների դրական կարծիքները, իրավագիտության ամբիոնը 13.07.2016թ.

(արձանագրություն № 9) կայացած նիստի որոշմամբ առաջարկում է Արսեն Գեորգիի Պողոսյանին, Արման Կառլենի Մելքոնյանին, Ռոբերտ Սուրենի Ղազարյանին ձևակերպել իրավագիտության ամբիոնում որպես հայցորդ՝ ԺԲ.00.02 <<Հանրային իրավունք>> մասնագիտացմամբ:

Արտահայտվեցին՝ Խ.Բեգիրջյանը, Ա.Եզեկյանը:

Որոշեցին՝ Արսեն Գեորգիի Պողոսյանին, Արման Կառլենի Մելքոնյանին, Ռոբերտ Սուրենի Ղազարյանին ձևակերպել իրավագիտության ամբիոնում որպես հայցորդ՝ ԺԲ.00.02 <<Հանրային իրավունք>> մասնագիտացմամբ:

Գիտական խորհրդի նիստի նախագահ՝

Ա.Լոբյան

Գիտական խորհրդի նիստի քարտուղար՝

Հ.Ստեփանյան
27 հուլիսի 2016թ.

Կ.Տ.